

## Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

«Փորձնական մանկավարժութեան արդիւնքներ».

Պրոֆ. Էրնստ Մոյմանի «Եասախօսութիւններ փորձնական մանկավարժութեան մասին» ռուսերէն թարգմանութիւնից ճիւսեց Pessimist. պիւր 50 կոպ. երես 77.

Պրոֆ. Մոյմանը էքսպերիմենտալ մանկավարժութեան ամենայայտնի ներկայացուցիչներից մէկն է այժմ: Մանկավարժութեան այս նոր ուղղութեան տեսական հիմնաւորման և ուսուցչական և դիտական շրջաններում տարածուելու համար գուցէ և ոչ մի հոգեբան—մանկավարժ այնքան չի աշխատել, որքան Մոյմանը: Նախկին դարերում մանկավարժական խնդիրներն հիմնւում էին պատահական դիտողութիւնների վրայ: Այդ դիտողութիւններից հանւում էին զանազան եզրակացութիւններ, որոնք կամ ճիշտ էին լինում, կամ սխալ, իսկ ընդհանրապէս միակողմանի՝ որովհետեւ պատահական, անծրագիր և ոչ լայն չափերով կատարած դիտողութիւնները այլ հետեւանքներ չէին կարող տալ: Ներկայում մանկավարժական խնդիրներն աւելի կազմակերպւած եղանակով են ուսումնասիրւում, իսկ որ ամենադիտարոն է՝ աւելի լաւ մեթոդներով: 19-րդ դարում հոգեբանութեան մէջ երբ էքսպերիմենտը մտաւ, հոգեբանութիւնը աւելի ուշալ հիմքերի վրայ դրուեց և աւելի զրական եզրակացութիւնների հասաւ: Միևնոյն պատմութիւնը կրկնւում է այժմ մանկավարժութեան համար: Մինչև նոր մեթոդի կիրառումը ոչ ոքի պարզ յայտնի չէր, թէ նկարչութեան, կարդալու, դիտողական ուսման ժամանակ աշակերտի հոգու որ էլեմենտներն են գլխաւորապէս դեր խաղում և ինչպէս են այդ էլեմենտները իրար վրայ ազդում: Ոչ ոքի յայտնի չէր, թէ մանկան հոգեկանը և մարմնականը, և մանաւանդ հոգու որոշ կարողութիւններն ինչպէս են զարգանում, աշակերտը դպրոցում ինչ չափերով է յոգնում և իսկ այժմ շնորհիւ էքսպերիմենտալ մանկավարժութեան ուսումնասիրութիւնների այդ խնդիրների վրայ լոյս է սփռուել և գտնուել խնդիրները մշակելու այն եղանակները, որոնց աւելի լայն չափերով և սիստեմատիկ գործադրութեամբ կարող պիտի լինենք այդ խնդիրների վերջնական եզրակացութեանը հասնելու: Մոյմանը մանկավարժական խնդիրների այս ձևակերպ-



ման համար ամենից շատ աշխատողներից մէկն է եղել և դեռ է: Այս նոր ուղղութեան հիմնադիրներից մէկն է եղել:

Մոյմանը ոչ միայն իդէալը ձևակերպող, այլ և իդէալը, նոր մաքերը տարածող մի անհատ է: Այս վերջին նպատակի համար 1907 թուին հրատարակեց երկու մեծահատոր գրքեր էքսպերիմենտալ մանկավարժութեան արդիւնքները մասին: Այդ գրքերը կարճ ժամանակում թարգմանուեցին համարեա ընդոր հուշտւորական լեզուներով: Այժմ մեր առաջ է դրուած այդ մօտ հաղար երեսանոց գերմաներէն գրքի ռուսերէն լիակատար թարգմանութիւնից կազմած, կամ ինչպէս հեղինակն է ասում, հիւսած 77 երեսանոց հայերէն գրքոյկը:

Ինչ պատճառներից գրողուած Մոյմանը ձեռնամուխ է եղել այդ մեծահատոր գրքերի հեղինակութեանը: Էքսպերիմենտալ մանկավարժութիւնը նոր երևոյթ է, երկու տասնամեակի կեսնը անգամ չո՛նի. նա մանկավարժական վիճելի հարցերի կարգին է պատկանում և մանկավարժական ու գիտական աշխարհում համակիր և հակառակ բանակներ ունի այս ուղղութիւնը: Մինչև այժմ զանազան երկրներում, այս կամ այն գիտնականի ձեռքով փորձեր են կատարուել մանկավարժական այլ և այլ հարցերի վերաբերեալ: Մասնադէտը միայն կարող է որոշ չափի հետևել այդ բազմազան աշխատանքների յառաջանալու ընթացքին և զարգացմանը, սակայն ո՛չ ուսուցիչը կամ մանկավարժական հարցով հետաքրքրող կրթուած մի անհատ: Առողջուստանից արդէն զգալի էր մի այնպիսի գրքի գոյութիւնը, որի մէջ լիակատար կերպով ամփոփուած լինէին մինչ այդ տեղի ունեցած փորձերի և հետազօտութիւնների հետևանքները: Մոյմանի գրքերը այդ կարիքը լրացնելու համար են հրատարակուել: Այստեղ բաւականին մանրամասն պատմում է էքսպ. մանկավարժութեան տարած յաղթութիւնների մասին: Այնտեղ ընթերցողը կըդանէ նոր մեթոդի բացատրութիւնը և ծագման պատճառները, մանկան հոգեբանութեանը, դպրոցական աշխատանքի որոշ առարկաների մեթոդիկաներին վերաբերող փորձերի տուած հետևանքները: Ամբողջ երկի ընթերցանութիւնից յետոյ կըպարզուի, թէ ինչ են ուզում այս նոր ուղղութեան ներկայացուցիչները և մինչև այժմ ինչ են արել: Այս ընդորից յետոյ ուշիմ ընթերցողը նաև այն եզրակացութեան կըգայ, որ այդ ուղղութիւնը դեռ շատ հարցեր քննութեան չի առել, որոշ հարցեր չի էլ կարող քննութեան առնել, իսկ քննութեան առած հարցերից շատերը դեռ վերջնական մշակման և ձևակերպման չեն ենթարկուել: Սակայն այս ընդորից յետոյ նա անխուսափելիօրէն պէտք



է նկատէ նաեւ այն, որ մանկավարժական այս նոր ուղղութիւնը իր հետ բերել է նոր հարցեր, նոր եղբակացութիւններ և խնդիրները մշակելու ձևերի աւելի գիտական եղանակներ: Այդ գրքերի ընթերցանութիւնից յետոյ մարդ այն համոզմանն է գալիս, որ էքսպերիմենտալ մեթոդի կանոնաւոր կիրառման ձևերի հարցի քննութեան և աւելի դրական լուծման պատեւը պէտք է 20-րդ դարուն պատկանի:

Յաւալի է, որ Մոյմանի գրքերի հայերէն հիւսուածքը շատ է համառօտաւոր, այնպէս որ մանկավարժական այս նոր ուղղութեանը անձանօթ ընթերցողը չի կարող մի լիակատար գաղափար կազմել էքսպ. մանկավարժութեան խնդիրների և այդ խնդիրները մշակելու գիտական մեթոդների մասին: Հարցերը այս գրուածքի մէջ տարօրինակ կը ճատումների են ենթարկուել: այն խնդիրները, որոնք Մոյմանի իսկական գրուածքի մէջ հարկւրաւոր երեսներ տեղ են բռնում, հայերէնի մէջ մի քանի երեսների մէջ են ամփոփուած: Հասկանալի է որ այդպէս էլ պէտք է լինէր, որովհետեւ կաղմողը իր ծրագիրը շատ նեղ սահմանների մէջ է դրել: նա ցանկացել է 77 երեսի մէջ տալ այն, ինչ Մոյմանը մօտ 1000 երեսի մէջ հաղիւ է ամփոփել: Աւնենալով նեղ ծրագիր հանգերձ, սակայն արժէք, որ հայերէն կաղմողը Մոյմանի գրքի մի կամ մի քանի գլուխներ աւելի մանրամասն նկարագրէր, օրգինալին աւելի հաւատարիմ մնար, որպէս զի հայ անտեղեակ ընթերցողի համար պարզուէր, թէ այս նոր ուղղութիւնը խնդիրներն ինչպէս, ինչ ձևերով է ընննութեան առնում և եղբակացութիւնների հասնում: Նւ իմ կարծիքով այդ տեսակետից ամենից յարմար գլուխները կաղմող էին լինել մայրենի լեզուի, թուաբանութեան կամ գծագրութեան մեթոդիկաներին վերաբերուող ուսումնասիրութիւնները: Այս կարեւոր խնդիրները հայերէն հիւսուածքի մէջ միմիայն 12 երես տեղ են բռնել:

Բայց և այնպէս այս գիրքը յանձնարարում ենք հայ ընթերցող հասարակութեան և մոնառանդ հայ ուսուցչութեան այն մասին, որը դասաւանդելու շարունական ձևերից ազատուելու և մանկավարժական խնդիրներին որ լուսաբանութիւնների կարիքն է զգում: Հաւատացած ենք, որ փոքր ի շատէ մանկավարժական և հոգեբանական հարցերով հետաքրքրուող ընթերցողը այս հայերէն գրքոյի ընթերցանութիւնից յետոյ կարիք պէտք է զգայ ի մօտոյ ծանօթանալու Մոյմանի լիակատար գրուածքների հետ:

Գ. Էդիկեան.